ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

12 նոյեմբերի շաբաթ 2022
տպագրության ԺԱ տարի

162
(2642

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 133

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը 2022 թվականի հունիսի 27-ին առցանց ասուլիս է ունեցել եւ կրկին անդրադառնալով ղարաբաղյան հակամարտության կարգավորման թեմային՝ արել մանիպուլատիվ հայտարարություններ: «Ժողովուրդ» օրաթերթը ներկայացնում է դրանցից մեկը: «Նախկին իշխանության ներկայացուցիչներ կան՝ ասում են, որ Լաչինի միջանցքը էսքան պետք է լիներ… էսքան կիլոմետր լայնություն: Բանակցային ոչ մի փաստաթղթում էդպիսի բան չկա»,- հայտարարել էր Փաշինյանը: Նման հայտարարություն նա արել էր նաեւ ապրիլի 14-ին Ազգային ժողովում՝ կրկին պնդելով, որ Լաչինի միջանցքի լայնությունը որեւէ փաստաթղթում չի նշվել: «Խոսում են, հեքիաթներ են պատմում՝ Լաչինի միջանցքն այսպես պետք է լիներ, Լաչինի միջանցքն այսպիսին պետք է լիներ. Լաչինի միջանցքի լայնության մասին բանակցային ոչ մի փաստաթղթում ոչինչ չկա: Դա հետո պիտի քննարկվեր»,- այդ անգամ նշել էր Փաշինյանը: Իսկ ո՞րն է իրականությունը. 1997 թվականին Մինսկի խմբի կողմից առաջարկված փուլային կարգավորման փաստաթղթում Լաչինի միջանցքի համար առաջարկվել է 20 կմ լայնություն: «Լեռնային Ղարաբաղի եւ Հայաստանի Հանրապետության միջեւ ազատ, անխոչընդոտ եւ անվտանգ տրանսպորտային հաղորդակցությունն ապահովելու նպատակով Լաչինի ճանապարհի երկայնքով սահմանվում է տարանցիկ գոտի՝ 20 կմ միջին լայնությամբ»,- ասվում է փաստաթղթում: Լայնության մասին խոսել էր նաեւ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանը: Նա իր՝ 2021 թվականի դեկտեմբերին տեղի ունեցած ասուլիսի ժամանակ հայտարարել էր, որ, Քի Վեսթի փաստաթղթով, Լաչինի միջանցքը ունենալու էր 42 կմ լայնություն եւ նույն կարգավիճակը, ինչ կունենար Արցախը: Սակայն Լաչինի միջանցքի լայնության մասին չի նշվում Մադրիդյան (2007) եւ Կազանյան (2011) փաստաթղթերում: Ամեն դեպքում, ստացվում է, որ Նիկոլ Փաշինյանը հերթական անհիմն, չճշտված տեղեկություններն է հրապարակել, քանի որ Լաչինի լայնության մասին գոնե մի քանի փաստաթղթերում նշված եղել է:

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը երեկ՝նոյեմբերի 11-ին, Եղվարդում համակցված կերերի նոր գործարանի բացման արարողությանն է ներկա եղել: Փոխվարչապետ Համբարձում Մաթեւոսյանի, ՀՀ էկոնոմիկայի փոխնախարար Արման Խոջոյանի հետ Փաշինյանին անհասկանալի կարգավիճակով ուղեկցել է նաեւ ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Վաղարշակ Հակոբյանը: «Ժողովուրդ» օրաթերթը նկատեց, որ Փաշինյանին հյուրընկալած մերօրյա օլիգարխ Նարեկ Նալբանդյանը, որն էլ հենց նոր գործարանի սեփականատերն է, առանց փողկապի էր դիմավորել ու ուղեկցել վարչապետին, ինչն արարողակարգային կոպիտ խախտում է: Դրա վրա ուշադրություն չեն դարձրել, գլխավորը նոր օլիգարխի բիզնես կարողությունների զարգացումն է, որը ապահովվում է Նիկոլ Փաշինյանի իշխանության օրոք: Նարեկ Նալբանդյանը, նշենք, «Շիրակ» թռչնաֆաբրիկայի, «Ման-Հոլդինգ» ընկերության սեփականատերն է, զբաղվում է ներկրումներով ու բիզնես այլ գործունեությամբ: Այս տարվա մարտին հենց գնց ՀՀ նախկին վարչապետ Հովիկ Աբրահամյանին պատկանող, Ազատության պողոտայում գտնվող (Մոնումենտի բարձունքում) շքեղ առանձնատունը: Նալբանդյանը Աբրահամյաններին, սակայն, տան համար վճարել է 48 մլն դրամ, մնացած մասը՝ 2?452 մլրդ դրամը, Նալբանդյանը մինչեւ օգոստոս ամիսը պետք է վճարեր: Նույնպիսի՝ «փակովի» տարբերակով» նա ձեռք էր բերել նաեւ Ծաղկաձորում գտնվող «Գոլդեն փելիս» հյուրանոցային համալիրը: Նախկին ոստիկան Նարեկ Նալբանդյանը, ըստ երեւույթին, բանեցնելով երբեմնի մասնագիտական հմտությունները, կարողանում է նաեւ ձվի շուկայի մյուս խաղացողներին խեղճացնել ու մոնոպոլ դիրք զբաղեցնել: Հենց դրանով է պայմանավորված, որ «Շիրակի» արտադրած ձվի գինը շուկայում պարբերաբար 20-30 դրամի է հասնում, որ հետագայում արհեստական գնաճի ու մոնոպոլ դիրքերի ամրապնդման հանգեցնի: Ինչ է ստացվում. Փաշինյանը, որն իշխանության էր գալիս օլիգարխիան ու մոնոպոլիան մերժելով, այժմ շուկայում հենց այդպիսի դիրք զբաղեցնողների հետ է տալիս-առնում, նրանց հյուրասիրած աղուհացը կիսում ու ամեն բան անում նորօրյա օլիգարխների ապահով առաջընթացի համար:

Շուրջ 1 տարի կալանքի տակ գտնվող «Մամիկոն Ասլանյան» կուսակցությունների դաշինքի՝Վանաձորի համայնքապետի հաղթած թեկնածու Մամիկոն Ասլանյանը իրեն քաղբանտարկյալ է համարում: Այս մասին նա հայտարարել է «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում: Մեր այն հարցին, թե այս ամիսների ընթացքում արդյոք հասկացել է, թե որն է իր մեղքը, որ կալանքի տակ է, Մամիկոն Ասլանյանը պատասխանեց. «Ընտրվել եմ, երեւի թե դա էր իմ մեղքը»: Ինչպես հայտնի է, 11 ամիս առաջ՝ դեկտեմբերի 4-ին, Երեւանի ընդհանուր իրավասության դատարանը, դատավոր Արուսյակ Ալեքսանյանի նախագահությամբ, որոշել էր բավարարել ՀՀ ՔԿ-ի միջնորդությունը «Մամիկոն Ասլանյան» կուսակցությունների դաշինքի՝ Վանաձորի համայնքապետի թեկնածու Մամիկոն Ասլանյանին կալանավորելու որոշումը: Քննչական կոմիտեն հայտարարել էր, որ առերեւույթ տվյալներ են ձեռք բերվել 2016թ. հոկտեմբերի 10-ից մինչեւ 2021թ. հոկտեմբերի 10-ն ընկած ժամանակահատվածում Վանաձոր համայնքի ղեկավարի պաշտոնը զբաղեցրած Մամիկոն Ասլանյանի կողմից իր պաշտոնեական լիազորությունները չարաշահելու եւ մի շարք այլ հանգամանքների վերաբերյալ: Ասլանյանի պաշտպանները պնդում են, որ նրա նկատմամբ քաղաքական հետապնդում է իրականացվում: Քրեական գործը հիմա էլ քննում է ՀՀ հակակոռուպցիոն դատարանը:

Հշխող «Քաղաքացիական պայմանագիր կուսակցության ներսում անարդարության մթնոլորտը շարունակում է թեւածել՝պայմանավորված կուսակցության վերջին համագումարին հաջորդած վարչության ընտրություններով: Այս ընտրությունը՝նախապես գրված ցուցակներով, պլանավորված կեղծվել է: Նախ՝հիշեցնենք, որ 2019 թվականին, երբ ՔՊ-ն նոր էր իշխանության եկել, համագումարին հրավիրել էին լրագրողներ, ավելին՝ վարչության անդամների ընտրությունների հաշվարկը ուղիղ եթերով հեռարձակվում էր: Նիկոլ Փաշինյանի եւ իր թիմակիցների գործողությունները ավելի քան թափանցիկ էին, եւ որեւէ կասկած չկար, որ իշխող կուսակցությունը կարող է ունենալ ոչ լեգիտիմ վարչություն: Սակայն հիմա ՔՊ-ն աշխատում է նախկիններից ավելի վատ ու մերժելի կանոններով, բարքերով. խուսափում են լրագրողների հետ շփումներից, առանձին ներկայացուցիչներ վիրավորում են հրապարակավ լրագրողներին: Բացի այդ, այսօր ՔՊ-ն աշխատում է զերո թափանցիկությամբ: Կեղծված վերջին ընտրություններից հետո շատ ՔՊ-ականներ միմյանց հետ զրույցներում պնդում են, որ եթե կուսակցության վարչության կազմի ընտրությունները կեղծող իշխանականները չպատժվեն, ուրեմն մեր երկիրը չի կարող գնալ զարգացման ուղղով: Ավելին՝«Ժողովուրդ» օրաթերթի հետ մասնավոր զրույցներում ՔՊ-ական պատգամավորները հայտնում են, որ թեեւ Արսեն Թորոսյանն իրենց կուսակցության ամենաչսիրված կերպարներից է, այնուամենայնիվ, նրա նկատմամբ իրականացված կեղծիքը եթե մարսեցին ՔՊ-ականները, ուրեմն բոլորը մտածելու խնդիր ունեն: Հիշեցնենք, որ ՔՊ կուսակցության ներսում գործել է մի խումբ, որը կորդինացրել է ընտրությունները. խմբի անդամները 4-ն են եղել՝ պատգամավորներ Արփի Դավոյանը, Վիլեն Գաբրիելյանը, Տրդատ Սարգսյանը եւ փոխվարչապետ Համբարձում Մաթեւոսյանը: Կուսակցական ընտրությունների կեղծիքների մասին բարձրաձայնել են շատերը ներսում, այդ թվում՝ պատգամավոր Թագուհի Ղազարյանը՝բողոքելով, որ Արփի Դավոյանը կեղծիքներ է կազմակերպում: Կոնկրետ հրահանգ է եղել Նիկոլ Փաշինյանի անունից՝ում ընտրել, ում ոչ մի դեպքում չընտրել: Արսեն Թորոսյանը, Ալեն Սիմոնյանը, Մարիա Կարապետյանը, Էդուարդ Աղաջանյանը եղել են սեւ ցուցակում: Կայացած խայտառակ վերահաշվարկի արդյունքում միայն Արսեն Թորոսյանը ընտրվեց ՔՊ վարչության անդամ, իսկ Համբարձում Մաթեւոսյանը եւ Հայկ Կոնջորյանը դուրս մնացին:

ԿԱՐՈՂ Է ԵԼՔ ԳՏՆԵԼ

ԱԼԻԵՎԻՆ ՈՉԻՆՉ ՉԻ ԿԱՆԳՆԵՑՆԵԼՈՒ

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը նոյեմբերի 10-ին՝ կառավարության նիստի ժամանակ, արձագանքելով Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի՝ Շուշիում արած հերթական հայտարարություն-հոխորտանքներին, հայտարարեց, որ Ադրբեջանի նախագահը փորձում է մտացածին հիմքեր ստեղծել Լաչինի միջանցքը փակելու, Լեռնային Ղարաբաղի հայությանը շրջափակելու եւ նրան ցեղասպանության ու հայրենազրկման ենթարկելու համար: Արցախի Ազգային ժողովի «Արդարություն» խմբակցության ղեկավար Դավիթ Գալստյանն այն համոզմանն է, որ նման հայտարարությամբ Նիկոլ Փաշինյանը փորձում է տպավորություն ստեղծել, թե անհանգստանում է արցախցիների համար, բայց արցախցիները Նիկոլ Փաշինյանին լավ են ճանաչում:

Ինչ վերաբերում է Ալիեւի՝ Արցախը հայաթափելու կամ այնտեղ ապրողներին ցեղասպանելու ցանկությանը, ապա, մեր զրուցակիցը վստահ է, Ադրբեջանի նախագահը դա երբեք էլ չի թաքցրել: Այդ ամենը նաեւ Արցախում բնակվող հայերն են հասկանում, բայց եւ գիտակցում են, որ միայն Արցախում ապրելով կարող են ստեղծված իրավիճակից ելքեր գտնել: Արցախի համար խաղաղության գրավականը, ասում է ընդդիմադիր խմբակցության ղեկավարը, մեր զինված ուժերը, բանակն ու ազգաբնակչությունն են: Իսկ Նիկոլ Փաշինյանը, շարունակում է, ոչ թե նոր է հասկացել, այլ առհասարակ չի էլ գիտակցում, որ որեւէ պայմանավորվածություն ու պայմանագիր նոր ոճրագործություններին ճանապարհին Ալիեւին չեն կանգնեցնելու:

-Նիկոլ Փաշինյանը հայտարարեց, որ Ադրբեջանի նախագահը փորձում է մտացածին հիմքեր ստեղծել Լաչինի միջանցքը փակելու, Լեռնային Ղարաբաղի հայությանը շրջափակելու եւ նրան ցեղասպանության ու հայրենազրկման ենթարկելու համար: Այս հայտարարությունից հետո Արցախում խուճապ կա՞, արցախցիներն այս հայտարարությանն ինչպե՞ս են վերաբերվում:

-Նիկոլ Փաշինյանը իր այդ հայտարարությամբ ցանկանում է ժողովրդին ցույց տալ, որ մտահոգվում է Արցախում բնակվող ժողովրդի համար, սակայն Արցախում բնակվող քաղաքացիները լուրջ չեն վերաբերվում Նիկոլ Փաշինյանի ասածին: Ամեն օր Ալիեւի անունից հնչում են սպառնալիքները՝ Արցախին ուղղված, սակայն Արցախում բնակվող քաղաքացիները խուճապի չեն մատնվում եւ չեն մատնվի, քանի որ գլոբալ առումով որ վերցնենք, դա հնչում է սուտասան Նիկոլ Փաշինյանի շուրթերից: Ալիեւը երբեք էլ չի թաքցրել իր ցանկությունները, եւ նա միշտ ցանկացել է հայաթափել Արցախը, բայց արցախահայությունը միշտ էլ գիտակցել է, որ ապրելով եւ շենացնելով Արցախը՝ կարող է ելք գտնել ստեղծված իրավիճակից դուրս գալու համար:

-Փաշինյանն Ալիեւի ելույթը տխրահռչակ է համարում ու ընդգծում, որ դրանով Ադրբեջանի ղեկավարը կոպտորեն խախտել է օրեր առաջ Սոչիում ընդունված եռակողմ հայտարարությամբ արձանագրված գրավոր պայմանավորվածությունը՝ ուժի կիրառումից ու ուժի կիրառման սպառնալիքից ձեռնպահ մնալու մասին: Փաշինյանը, ըստ Ձեզ, նո՞ր է հասկանում, որ Ալիեւի հետ ինչ պայմանավորվածություն էլ ձեռք բերի, նա շարունակելու է սպառնալ ու հոխորտալ:

-Ցավոք սրտի, Նիկոլ Փաշինյանը ոչ թե նոր է հասկանում, այլ, իմ կարծիքով, չի էլ հասկացել մինչեւ այժմ: Անգամ այդ «խաղաղության պայմանգիր» կոչվածը, որը տանում է կապիտուլյացիայի, Ալիեւին չի կանգնեցնելու իր նպատակներից: Այս ամենից ելնելով՝ ոչ թե պետք է խոսել խաղաղության դարաշրջան ստեղծելուց, այլ անհրաժեշտ է հստակ քայլերի գնալ, որպեսզի ապահովվի մեր երկրի անվտանգությունը, եւ մեր անվտանգության գրավականը պետք է լինի մեր զինված ուժերը, մեր բանակը եւ մեր ազգաբնակչությունը:

-Չնայած ամենօրյա լարվածությանը, Ալիեւի սպառնալիքներին ու բռունցք թափ տալուն՝ ՀՀ իշխանությունները շարունակում են խոսել խաղաղության պայմանագրից ու դրա՝ կյանքի կոչումից: Արցախում, ի վերջո, դա ինչպե՞ս են պատկերացնում: Արցախի իշխանությունները, մի կողմից, հայտարարում են, թե ՀՀ իշխանության գործելաոճն իրենց համար անընդունելի է, մյուս կողմից՝ Փաշինյանի հասցեին որեւէ թթու խոսք ասել չեն ուզում:

-Այո, ցավալի է, որ Արցախի իշխանությունների կողմից չի հնչում համարժեք պատասխան Նիկոլ Փաշինյանին: Նիկոլ Փաշինյանի վարած քաղաքականության հետ նրանք համաձայն չեն միայն Արցախի մասով, իսկ Հայաստանի Հանրապետությունում վարած քաղաքականության հետ կապված՝ Արցախի իշխանությունը ոչ թե ձեռնպահ է մնում, այլ վախենում է որեւէ գնահատական տալ, եւ այդ ամենը քողարկում են նրանով, որ իրենք չենք ցանկանում խառնվել նրա՝ Հայաստանում վարած քաղաքականությանը: Հիմնավորում են իրենց ասածը նրանով, որ նրան ընտրել է Հայաստանի բնակչությունը: Մենք բոլորս գիտակցում ենք, որ չկա Արցախի հարց, չկա Հայաստանի հարց, այլ կա Նիկոլ Փաշինյան, որը պատուհաս է դարձել հայ ժողովրդի համար: Մենք բոլորս պետք է պատրաստ լինենք բոլոր քայլերին՝ թե՛ ներքին, թե՛ արտաքին: Նիկոլ Փաշինյանին չպետք է թույլ տալ՝ կարմիր գծերը անցնի, որը բազմիցս նա անցել է, սակայն Արցախի իշխանությունները դեռ չեն հասկացել, բայց հուսով եմ՝ դեռ կհասկանան:

Զրուցեց ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԸ

ԱԿԱՆԱՏԵՍԻ ԱՉՔԵՐՈՎ

ԱՐՑԱԽԻ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՆՀԱՆԳՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը սոցցանցի իր էջում գրում է. «Արցախ կատարած այցից հետո հանդիպեցի ՀՀ-ում Ռուսաստանի Դաշնության արտակարգ եւ լիազոր դեսպան Ն.Գ. պարոն Սերգեյ Կոպիրկինին: Մեր ռազմավարական դաշնակից պետության դեսպանի հետ քննարկեցինք հայկական երկու հանրապետություններին՝ Հայաստանին եւ Արցախին պատուհասած վտանգները: Անհանգստացնող երեւույթները, ցավոք, շարունակաբար ավելանում են:

Ականատեսի աչքերով ներկայացրի Արցախի ժողովրդի առօրյա անհանգստությունները, քանի որ օրեր առաջ եմ վերադարձել Արցախի Հանրապետությունից: Մարդիկ այնտեղ հստակ ունեն մեկ պայման ու պահանջ. ռուս խաղաղապահները պետք է շարունակեն մնալ ներկայացված Արցախի Հանրապետության տարածքում: Նրանց առաքելության ժամկետի երկարաձգումը խիստ անհրաժեշտություն է՝ արցախահայության կյանքի իրավունքի իրացման տեսանկյունից:

Դեսպանի ուշադրությունը հրավիրեցի նաեւ ՀՀ սահմաններում առկա իրավիճակին առ այն, որ ադրբեջանական զինուժի կողմից շարունակվում է ՀՀ սուվերեն տարածքի մի շարք հատվածների ապօրինի բռնազավթումը: Միաժամանակ ընդգծեցի ադրբեջանական ագրեսիայի հետեւանքով զոհված զինծառայողների մարմինները վերադարձնելուց չարամտորեն հրաժարվելու՝ Ադրբեջանի վարքագծի անթույլատրելիությունը: Դեռ ունենք անթաղ դիեր:

Քննարկեցինք նաեւ ՀՀ-ում ՌԴ քաղաքացիների եւ ՌԴ-ում ՀՀ քաղաքացիների իրավունքներին առնչվող տարաբնույթ հարցեր:

«ՄՈՌԱՑԵԼ ԵՆ» ՆՇԵԼ

Գաղտնիք չէ, որ ՀՀ-ում կան պետական կառույցներ, որոնք աշխատակիցների եւ կադրերի պակաս ունեն: ArmLur.am-ը նոր շարքի շրջանակներում կփորձի ներկայացնել, թե ինչ է կատարվում նախարարություններում: Ուշագրավ է, որ ՀՀ արտաքին գործերի նախարարության պաշտոնական կայքում անգամ թերի տեղեկատվություն է առկա:

Նախարարության «Կառուցվածք» բաժնից բացակայում են անգամ նախարարի մասին տվյալները: Պաշտոնական կայքից անգամ չես կարող պատկերացում կազմել, թե ով է ՀՀ արտաքին գործերի նախարարը: Առկա են միայն նախարարի երեք տեղակալների մասին տեղեկություններ, չորրորդ տեղակալի մասին տեղեկությունը եւս բաց է:

Այլ տեղեկություններ կայքում եւս բաց են. նախարարությունը չունի Միջին Արեւելքի եւ Աֆրիկայի վարչության պետ, Քաղաքական ծրագրավորման վարչության պետ եւ Ներքին աուդիտի բաժնի պետ:

Նկատենք՝ 2021 թվականի օգոստոսի 19-ին է Արարատ Միրզոյանը նշանակվել նախարարի պաշտոնում, սակայն մինչեւ հիմա անգամ կայքում անհրաժեշտ կարգավորումները չեն կատարվել:

ԲՏԱ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԴԵՄ Է

Դոլարի փոխարժեքի նվազումից դժգոհող տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ներկայացուցիչներն առաջարկում են հատուկ հիմնադրամ ստեղծել, ինչի միջոցով ծրագրավորողները կկարողանան աշխատավարձ ստանալ արտարժույթի ավելի շահեկան փոխարժեքով, այսինքն, ավելի պարզ ասած, դոլարի համար հստակ փոխարժեք սահմանել ու այդ փոխարժեքով աշխատավարձ տալ ծրագրավորողներին:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում մի շարք ծրագրավորողներ նման առաջարկի հրատապությունը բացատրեցին նրանով, որ SS ոլորտում ներդրում կատարած ընկերությունները շարունակեն Հայաստանում գործունեություն ծավալել: Մեր տեղեկություններով՝ ծրագրավորողների այս առաջարկը պետական մի քանի գերատեսչություններով անցել, քննարկվել է՝ կառավարությունից մինչեւ Կենտրոնական բանկ ու Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ պետական կառույցներից միայն ԲՏԱ նախարարությունն է եղել, որ առարկել ու չի համաձայնել այդ առաջարկին՝ նշելով, թե դա հավելյալ ծախսեր է ստեղծելու պետբյուջեի վրա: Սա այն նախարարությունն է, որը կոչված է գրավիչ դարձնելու բարձր տեխնոլոգիական ոլորտը Հայաստանում:

Նախարարությունից, սակայն, «Ժողովուրդ» օրաթերթին տեղեկացրին, որ իրենք գրավոր կամ բանավոր կերպով նման նախագիծ կամ առաջարկ չեն ստացել:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՊԱՅՔԱՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Ազգային ժողովի «Հայաստան» եւ «Պատիվ ունեմ» խմբակցությունների պատգամավորները տեւական դադարից հետո որոշել են վերադառնալ խորհրդարան եւ բնականոն կերպով մասնակցել նոյեմբերի 15-ին մեկնարկելիք հերթական նստաշրջանի աշխատանքներին:

«Եկող շաբաթվա ԱԺ նիստերին մենք մասնակցելու ենք, բայց դա չի նշանակում, որ Նիկոլ Փաշինյանի իշխանության դեմ պայքարը չի շարունակվելու: Փողոցում, այլ ձեւաչափի պայքարի միջոցները կիրառվելու են Նիկոլ Փաշինյանի իշխանության դեմ, նրա շարունակականությունը կասեցնելու դեմ, բայց այս պահին կլինենք նաեւ խորհրդարանում:

Մենք խորհրդարանական լծակները մինչ այս ծառայեցրել ենք որպես բացառապես պայքարի գործիք, եւ մենք այդ գործիքը պատրաստվում ենք ամբողջապես օգտագործել: Մեր դիրքորոշման մեջ ոչինչ չի փոխվել»,- ArmLur.am-ի հետ զրույցում ասաց ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը:

Թագուհի Թովմասյանը եւս մեկ անգամ վերահաստատեց, որ իրենց ձեռքի տակ եղած ամբողջ գործիքակազմն օգտագործելու են այս իշխանությունների հեռացման համար: Ըստ պատգամավորի՝ Ազգային ժողովում լինելը եւ փողոցային պայքարը միմյանց չբացառող գործընթացներ են:

ՕԼԻԳԱՐԽԻԿ ԿԱՊԵՐ՝ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ

Կոնդի բնակիչները շարունակում են բարձրաձայնել ու պահանջել, որ կառավարությունն ու քաղաքապետարանը քայլեր ձեռնարկեն՝ վերաչափագրելու իրենց տներն ու հողամասերը: Նրանց պայքարը մի քանի տասնամյակի պատմություն ունի: ArmLur.am-ը եղել է Կոնդում ու զրուցել բնակիչների հետ: Երկար տարիներ խոսվում է Կոնդի բնակիչների տները չափագրելու, Կոնդի տարածքում «Հին Երեւան» նախագիծ իրականացնելու ու, ըստ անհրաժեշտության, բնակիչների տները կամ վերակառուցելու, կամ փոխհատուցում տրամադրելու մասին:

Այդ մասին մեկ անգամ չէ, որ հայտարարել են քաղաքային իշխանությունները, Փաշինյանի իշխանությունը եւս բացառություն չէ, բայց, կոնդեցիների համոզմամբ, իրենց խնդիրներն ու բողոքի ձայնը Փաշինյանին չեն հասնում: Իրենց կողմից ներկայացված փաստաթղթերը մնում են միջին օղակներում, իսկ մանր չինովնիկները խնդրին լուծում տալ ու դա իրենց վերադասներին ներկայացնել պարզապես չեն ուզում:

AstraZeneca-ի ՄԱՍԻՆ

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆԻ ՍՏԵՐԸ

«Ժողովուրդ» օրաթերթը այս տարվա մայիսից «Նիկոլ Փաշինյանը խաբել է» անվամբ շարք է սկսել եւ ամեն օր օրաթերթի հերթական համարում ներկայացնում է վարչապետի՝ տարբեր ժամանակներում արած հայտարարություններն ու իրականությունը՝ ապացուցելով, որ նա տարբեր առիթներով մանիպուլացնում եւ խաբում է քաղաքացիներին:

Ի լրացումն այս շարքի՝ արդեն ArmLur.am լրատվական կայքում կսկսենք մեկ այլ շարք եւ կներկայացնենք արդեն «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամ պաշտոնյաների կողմից տարբեր ժամանակներում ասված կեղծ հայտարարությունները, քանի որ նման գործելաոճ, ամեն դեպքում, միայն վարչապետը չէ, որ ունի: Նման գործելաոճով աչքի են ընկել ոչ միայն կոնկրետ անձինք, այլ նաեւ գերատեսչությունները՝ պաշտոնական հաղորդագրությունների միջոցով:

ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր, ՀՀ առողջապահության նախարար Արսեն Թորոսյանն աչքի է ընկել մանիպուլատիվ հայտարարություններով եւ կեղծիքով հատկապես կորոնավիրուս համավարակի բռնկման ժամանակ: Ամենավառ օրինակը նրա խոսքերն էին՝ ասված 2020 թվականի փետրվարի 27-ին, երբ նա հայտարարեց, թե կորոնավիրուսը վտանգավոր վարակ չէ, եւ սա՝ այն դեպքում, երբ արդեն այդ ժամանակ այդ հիվանդությունն աշխարհում խլել էր 2700-ից ավելի մարդու կյանք:

Հետագայում նրա մանիպուլատիվ հայտարարություններն ավելացել են: Արդեն 2021 թվականի ապրիլի 9-ին «Սիվիլնեթ»-ի եթերում նախկին նախարարը նշել է. «Եվրոպական որեւէ երկրում AstraZeneca պատվաստանյութի արգելք չկա, եւ ես զարմանում եմ, թե որտեղից են այդ բամբասանքները լցվում եթեր: Պարզապես եղել են որոշակի դեպքեր, երբ եղել է պացիենտի առողջական ժամանակագրական դեպք, եւ դա նախորդել է պատվաստումը: Դա բնորոշ է բոլոր պատվաստանյութերին»: Սակայն ԵՄ դեղանյութերի կարգավորիչ մարմինն ապրիլի 7-ին հրապարակել էր զեկույց, որը հենց վերաբերում էր AstraZeneca պատվաստանյութին եւ թրոմբոզի առաջացմանը: «Հանձնաժողովը հիշեցնում է բժշկական անձնակազմերին եւ քաղաքացիներին, որոնք պատվաստվում են, տեղյակ լինել պատվաստմանը հաջորդող 2 շաբաթների ընթացքում արյան մեջ ցածր քանակով թրոմբոցիտներով ուղեկցվող հազվադեպ հանդիպող թրոմբոզի առաջացման հավանականության մասին»:

Միեւնույն ժամանակ սուտ էր Փաշինյանի այն պնդումը, թե պատվաստանյութի արգելք եվրոպական երկրներում չկա: Իրականությունը բոլորովին այլ էր: Օրինակ՝ Նիդերլանդներում պատվաստանյութի այդ տեսակն արգելված էր բոլորի համար, Իտալիայում եւս այն հետագայում արգելվեց: Կորոնավիրուսի շրջանում AstraZeneca-ի օգտագործումը երիտասարդ քաղաքացիների շրջանում արգելվել էր Ֆրանսիայում, Գերմանիայում, Շվեդիայում եւ Կանադայում:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բրյուսել աշխատանքային այցի ընթացքում մարդու իրավունքների պաշտպան Քրիստինե Գրիգորյանը հանդիպել է Բելգիայի ֆրանսախոս եւ հոլանդախոս Դաշնային օմբուդսմաններին: Հանդիպման ընթացքում տիկին Գրիգորյանը ներկայացրել է Պաշպանի հաստատության մանդատը, լիազորություններն ու գործունեության առաջնահերթ ուղղությունները:

Բելգիայի հոլանդախոս օմբուդսման Դեյվիդ Բաելը ներկայացրել է Բելգիայի օմբուդսմենական հաստատության գործունեության առանձնահատկությունները, ինչպես նաեւ անդրադարձել հաստատության կողմից քաղաքացիական ծառայողների բարեվարքության ստուգման մեթոդաբանությանն ու գործիքակազմին, անցկացվող հետաքննությունների գործընթացին: Հանդիպման ավարտին կողմերը պայմանավորվել են շարունակել համագործակցությունը երկու հաստատությունների միջեւ:

ՇՐԻ ԼԱՆԿԱՅՈՒՄ ՀՀ ԴԵՍՊԱՆ

Հայաստանի Հանրապետության նախագահ Վահագն Խաչատուրյանի հրամանագրով՝ Յուրի Բաբախանյանը համատեղության կարգով նշանակվել է Շրի Լանկայում ՀՀ դեսպան: Համապատասխան հրամանագիրը հրապարակվել է ՀՀ նախագահի պաշտոնական կայքում:

«Հիմք ընդունելով վարչապետի առաջարկությունը, համաձայն Սահմանադրության 132-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ինչպես նաեւ «Դիվանագիտական ծառայության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի.

Հնդկաստանի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Յուրի Բաբախանյանին, համատեղության կարգով, նշանակել Շրի Լանկայի Ժողովրդավարական Սոցիալիստական Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան (նստավայրը՝Նյու Դելի)»,- ասված է նախագահի հրամանագրում:

ԱՏՈՄԱՅԻՆ ՆՈՐ ԷՆԵՐԳԱԲԼՈԿ

ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանն ընդունել է «Ռոսատոմ» պետկորպորացիայի գլխավոր տնօրենի գիտության եւ ռազմավարության գծով տեղակալ, «ՏՎԷԼ» ԲԸ տնօրենների խորհրդի նախագահ Յուրի Օլենինի գլխավորած պատվիրակությանը:

Նախարարը ողջունել է հյուրերին եւ կարեւորել «Ռոսատոմ»-ի հետ համագործակցությունը: Հանդիպման ժամանակ քննարկվել են ատոմային նոր էներգաբլոկի կառուցման հետ կապված մի շարք հարցեր:

ՀԱՇՏԵՑՄԱՆ ՔԱՆՔԵՐ

ԵՄ-ն ողջունում է Հայաստանի եւ Ադրբեջանի ղեկավարությունների ձեռնարկած բազմաթիվ քայլերը՝ ուղղված տարաձայնությունների հարթմանը. այս մասին նշել է ԵՄ դիվանագիտական գերատեսչության պաշտոնական ներկայացուցիչ Պիտեր Ստանոն ԼՂ հակամարտության գոտում 44-օրյա պատերազմի ավարտի երկրորդ տարվա կապակցությամբ արված հայտարարությունում:

«Այս առիթով ԵՄ-ն հիշում է վերջին 30 տարիների ընթացքում հակամարտության բոլոր հայ եւ ադրբեջանցի զոհերին: Լիովին գիտակցելով այս դժվարին ժառանգությունը՝ԵՄ-ն երկու կողմերին էլ կոչ է անում շրջել թշնամանքի էջը եւ շարունակել հաշտեցման ջանքերը՝ կանխելու մարդկային կյանքի հետագա անհարկի կորուստը եւ վնասները», - նշված է հայտարարությունում:

2 ՏԱՐԻ ԱՆՑ

ԻՆՉ ԿՈՐՈՇԻ ԴԱՏԱՐԱՆԸ

Երկու տարի առաջ՝ այս օրը, սպանվեցին քրեական հեղինակություն Արթուր Ղազարյանը՝ քանաքեռցի Տույը, ԱԺ նախկին պատգամավոր Արտուշ Սիմոնյանը. քրեական գործով մաս կա անջատված, եւ իրավապահները մինչ օրս դեռեւս փնտրում են Տույի սպանության գործով մեկ անձի, որ ԱԺ նախկին պատգամավորի հարազատներից է:

Բուն քրեական գործը դատարանում է:

Գրել էինք, որ ՀՀ քննչական կոմիտեն նախաքննության ավարտ է հայտարարել քրեական հեղինակություն Արթուր Ղազարյանի՝ քանաքեռցի Տույի, ԱԺ նախկին պատգամավոր Արտուշ Սիմոնյանի եւ եւս երկու անձանց սպանության դեպքով: Քրեական գործը դատարանում է, եւ այն մակագրվել է Երեւան քաղաքի դատավոր Մանվել Շահվերդյանին:

Armlur.am-ին ուշագրավ հանգամանք էր հայտնի դարձել: Սպանված ԱԺ նախկին պաագամավոր Արտուշ Սիմոնյանին եւս (որը կրակոցների ժամանակ մահացավ իր սեփական տան բակում) նախաքննական մարմինը մեղադրանք է առաջադրել:

Այսպիսով, տեղեկացանք, որ Հակոբ Սիմոնյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, 2021 թվականի նոյեմբերի 11-ին՝ ժամը 02:36-ի սահմաններում, խմբի կազմում, հոր՝ Արտուշ Սիմոնյանի, եղբայրներ Վլադիմիր եւ Հովհաննես Սիմոնյանների եւ մտերիմներ Տիգրան Հարությունյանի եւ Արսեն Ալեքսանյանի հետ, Արթուր Հայկի Ղազարյանին, Արայիկ Բորիսի Խաչատրյանին, Արթուր Աշոտի Բորյանին, Գեւորգ Արթուրի Ջաբուրյանին եւ Գեղամ Արտուշի Ղազարյանին սպանելու՝ ապօրինաբար կյանքից զրկելու ուղղակի դիտավորությամբ Երեւան քաղաքի Քանաքեռ 16-րդ փողոցի 16Ա տան բակում վերջիններիս հետ տեղի ունեցած վիճաբանության ժամանակ նախապես ապօրինի կերպով ձեռք բերված եւ իրենց մոտ ապօրինի կերպով պահվող հրազեններով, փոխլրացնելով միմյանց գործողությունները, ատրճանակներով կրակել եւ ապօրինաբար կյանքից զրկել են Արթուր Ղազարյանին, Արայիկ Խաչատրյանին եւ Արթուր Բորյանին, իսկ Գեղամ Ղազարյանին եւ Գեւորգ Ջաբուրյանին պատճառել են հրազենային վնասվածքներ եւ վերջիններիս սպանությունն ավարտին չեն հասցրել իրենց կամքից անկախ՝ Գ. Ղազարյանի եւ Գ. Ջաբուրյանի՝ փախուստի դիմելու հանգամանքով պայմանավորված:

Արտյուշ Վլադիմիրի Սիմոնյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, որդիների՝ Վլադիմիր, Հովհաննես, Հակոբ Սիմոնյանների, մտերիմներ Արսեն Ալեքսանյանի եւ Տիգրան Հարությունյանի հետ, նախնական համաձայնության գալով խմբի կազմում, Արթուր Հայկի Ղազարյանին, Արայիկ Բորիսի Խաչատրյանին, Արթուր Աշոտի Բորյանին, Գեւորգ Արթուրի Ջաբուրյանին եւ Գեղամ Արտուշի Ղազարյանին սպանելու՝ ապօրինաբար կյանքից զրկելու ուղղակի դիտավորությամբ 2021 թվականի նոյեմբերի 11-ին՝ ժամը 02:36-ի սահմաններում, Երեւան քաղաքի Քանաքեռ 16-րդ փողոցի 16 Ա տան բակում վերջիններիս հետ տեղի ունեցած վիճաբանության ժամանակ նախապես ապօրինի կերպով ձեռք բերված եւ իրենց մոտ ապօրինի կերպով պահվող հրազեններով, փոխլրացնելով միմյանց գործողությունները, կրակել եւ ապօրինաբար կյանքից զրկել են Արթուր Ղազարյանին, Արայիկ Խաչատրյանին եւ Արթուր Բորյանին, իսկ Գեղամ Ղազարյանին եւ Գեւորգ Ջաբուրյանին պատճառել են հրազենային վնասվածքներ եւ վերջիններիս սպանությունն ավարտին չեն հասցրել իրենց կամքից անկախ՝ Գ. Ղազարյանի եւ Գ. Ջաբուրյանի՝ փախուստի դիմելու հանգամանքով պայմանավորված:

Այս գործով մեղադրյալի աթոռին են հայտնվել նախկին պատգամավորի մյուս երկու որդիները եւ նրանց տանը գտնվող բարեկամներից մեկը՝ Արսեն Ալեքսանյանը. մյուս որդին ազատության մեջ է:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

ԽԱՐԴԱԽՈՒԹՅԱՄԲ ՀԱՓՇՏԱԿԵԼ ԵՆ ԳՈՒՄԱՐ

Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության նախկին պաշտոնատար անձանց կողմից պաշտոնական դիրքի չարաշահման եւ պաշտոնական կեղծիք կատարելու դեպքերի առթիվ քննվող քրեական վարույթի շրջանակում «Լեֆսիաբ» ՍՊ ընկերության տնօրեն Պ.Թ.-ի նկատմամբ հարուցվել է քրեական հետապնդում:

Ընկերության տնօրենը, լինելով 100 տոկոս մասնակցություն ունեցող բաժնետեր եւ տնօրեն, պատրաստել եւ օգտագործել է բովանդակությամբ կեղծ փաստաթուղթ եւ նախարարության պաշտոնատար անձանց հետ համատեղ կատարել առանձնապես խոշոր չափերի հափշտակություն:

Դատախազությունից հիշեցնում են, որ, կառավարության 2019 թվականի որոշմամբ, նախարարությանը հատկացվել է 2 մլրդ 380 մլն 457 հազար դրամ, որից 270 մլն դրամը՝ շենքերի եւ բնակարանների ձեռքբերման ու կահավորման, այդ թվում՝ նաեւ տարեցների բնակության համար խնամքի տների ձեռքբերման համար:

Ընկերության տնօրենը, մասնակցելով նախարարության կողմից հայտարարված գնման մրցույթին, առանձնապես խոշոր չափերով գումար հափշտակելու դիտավորությամբ նախարարություն է ներկայացրել մասնակցության դիմում-հայտարարություն եւ կազմել մատակարարվելիք ապրանքի կեղծ տեխնիկական բնութագիր:

Մասնավորապես, Արմավիրի մարզի երկու գյուղերում ձեռք բերված առանձնատները, որոնք, ըստ փաստաթղթերի, ունեցել են երկու սանհանգույց եւ եղել են պիտանի բնակության համար, պարզվել է՝ չեն համապատասխանել նախարարության ներկայացրած բնութագրին: Հրատապ մեկ անձից գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ընտրված մասնակից է ճանաչել ՍՊ ընկերությանը եւ հաստատել պայմանագիրը:

Բացի այդ, նախարարության գլխավոր քարտուղարը, տեղյակ լինելով չհամապատասխանող տեխնիկական բնութագրին, նախարարության մյուս պաշտոնատար անձանց միջոցով դրական եզրակացությամբ հաստատել է, որ բնութագրի եւ գույքի որակական հատկանիշների միջեւ անհամապատասխանություններ առկա չեն: Նախարարության պաշտոնատար անձանց եւ ՍՊ ընկերության միջեւ 18 մլն 205 հազար եւ 18 մլն 495 հազար դրամ շուկայական արժեքով առանձնատների պայմանագրերը կնքվել են 26 մլն 730 հազար եւ 26 մլն 950 հազար դրամ արժեքներով, որն էլ փոխանցվել է ՍՊ ընկերությանը: Արդյունքում ՍՊ ընկերության տնօրենը հափշտակել է 17 մլն 160 հազար դրամը:

Քրեական վարույթով նախաքննությունը շարունակվում է: Ձեռնարկվում են անհրաժեշտ միջոցներ՝ կոռուպցիոն սխեմայում ներգրավված անձանց ամբողջական շրջանակը պարզելու եւ նրանց նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու ուղղությամբ:

ԼՈՒՐԵՐ

ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ

ArmLur.am-ի տեղեկություններով՝ ուշագրավ դեպք է տեղի ունեցել Նոր Նորքի 186 դպրոցում: ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ մի կին դիմել է Քննչական կոմիտե եւ հայտնել, որ իր դստերը՝ Է. Մ.-ին, 186 դպրոցում հասցրել են հուզական ծանր վիճակի, ինչի պատճառով վերջինս կատարել է ինքնասպանության փորձ:

ԱՄՈՒՍԻՆԸ ՀԱՐՑԱՔՆՆՎԵԼ Է

ArmLur.am-ի տեղեկություններով՝ Պեմզաշենում տեղի ունեցած ողբերգական դեպքով հարցաքննվել է ընտանիքի հայրը, որն օրերս է վերադարձել արտերկրից: Մեզ հայտնի դարձավ, որ նա նշել է, որ իրենց տանը ոսկի ունեն, եւ իրավապահները այդ հետքով գտել են ոսկին: Այսինքն՝ կարող ենք ենթադրել, որ գողության վարկածը բացառվում է: Հիշեցնենք, որ երեկ ոստիկանությունը հայտարարություն էր տարածել, որում ասվում էր, որ նոյեմբերի 9-ին Շիրակի մարզի Պեմզաշեն գյուղում առանձնապես ծանր հանցագործություն էր կատարվել: Ժամը 12.28-ին Արթիկի հրշեջ-փրկարարական ծառայությունից ոստիկանություն հաղորդում էր ստացվել, որ Պեմզաշենի դպրոցի դիմացի տան դուռը փակ է: Հրշեջ-փրկարարները բացել էին դուռը: Տան ննջասենյակում հայտնաբերվել էին 31-ամյա Զարինե Մելիքսեթյանի, նրա 12-ամյա դստեր եւ 8-ամյա որդու դիերը՝ կտրած-ծակած վնասվածքներով: Դեպքի վայր մեկնեցին իրավապահ մի շարք կառույցների ներկայացուցիչներ: Նախաձեռնվեց քրեական վարույթ, որի շրջանակներում հետեւողականորեն իրականացվում են օպերատիվ-հետախուզական միջոցառումներ ու քննչական գործողություններ՝ կատարվածի հանգամանքները որոպե առաջ պարզելու ուղղությամբ: Ոստիկանությունը դիմում է հասարակությանը՝ ակնկալելով քաղաքացիների աջակցությունն ու համագործակցությունը: Դեպքի վերաբերյալ տեղեկություն ունեցողներին խնդրում ենք դիմել ոստիկանության ցանկացած ստորաբաժանում կամ զանգել 1-02, 010 59-06-60 հեռախոսահամարներով: Կատարվածի բացահայտման առումով արժեքավոր տեղեկություն հայտնող անձի գաղտնիությունը երաշխավորվում է, ինչպես նաեւ կտրվի դրամական պարգեւ:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՓՈՐՁՈՒՄ ԵՆ ՓՐԿԵԼ

Նոյեմբերի 10-ին՝ ժամը 21:10-ին, Լոռու մարզային ճգնաժամային կառավարման կենտրոն ահազանգ է ստացվել, որ Աքորի գյուղի մոտակայքում գտնվող ձորը քաղաքացի է ընկել? անհրաժեշտ է փրկարարների օգնությունը: Ինչպես տեղեկացնում են ՀՀ ԱԻՆ-ից, դեպքի վայր է մեկնել ԱԻՆ ՓԾ մարզային փրկարարական վարչության հրշեջ-փրկարարական ջոկատից մեկ մարտական հաշվարկ: Փրկարարները մոտ 7 մ խորությունից պատգարակով դուրս են բերել Ա. Օ.-ին (ծնված 2005 թ.) եւ մոտեցրել շտապօգնության ավտոմեքենային. տուժածը հոսպիտալացվել է Ալավերդու ԲԿ, որտեղ բժիշկները նրա առողջական վիճակը գնահատել են ծայրահեղ ծանր:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ նոյեմբերի 10-ից 11-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 57 դեպք, որոնցից 8-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

ԱՊԱՄՈՆՏԱԺՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Երեւանի քաղաքապետարանի համապատասխան ստորաբաժանումների եւ Կենտրոն վարչական շրջանի ուժերով ապամոնտաժվել են Օղակաձեւ զբոսայգու 6-րդ հատվածում՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ տեղադրված կրպակները:

Քաղաքապետարանից հայտնում են, որ գործընթացը լինելու է շարունակական, եւ հանգստի գոտու տարբեր հատվածներում ինքնակամ տեղադրված սրճարանային կառույցներն ու կրպակները փուլ առ փուլ վերածվելու են կանաչապատ տարածքների:

ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏ

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը նոյեմբերի 11-ին հերթական նիստն է գումարել: Օրակարգում երկու հարց է ընդգրկված եղել՝ առաջինը՝ 2023-ին սպասվող Տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների քվեարկության օրեր սահմանելու մասին էր, երկրորդ հարցով ուժը կորցրած է ճանաչվել ԿԸՀ 2016 թվականի հունիսի 17-ի «Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների անդամների թեկնածուների դիմումի ձեւը եւ անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը սահմանելու մասին» N 33-Ն որոշումը:

Այսպիսով, ՏԻՄ հերթական ընտրությունների օրեր են սահմանվել 2023 թվականի մարտի 26-ը, հունիսի 11-ը եւ հոկտեմբերի 29-ը: Քվեարկությունների օրերը սահմանելու հարցը ներկայացրել է ԿԸՀ քարտուղար Արմեն Սմբատյանը: ԿԸՀ նախագահ Վահագն Հովակիմյանն էլ հավելել է, որ նշանակված քվեարկությունների օրերը չեն վերաբերում Երեւանի ավագանու ընտրություններին, քանի որ, Ընտրական օրենսգրքի համաձայն, Երեւանի ավագանու ընտրությունները նշանակում է կառավարությունը: Մյուս հարցը ներկայացրել է ԿԸՀ փոխնախագահ Նունե Հովհաննիսյանը, ում խոսքով՝ հանձնաժողովին ներկայացված նախագիծը պայմանավորված է 2022 թվականի հուլիսին Ընտրական օրենսգրքում կատարված փոփոխությամբ, մասնավորապես՝ փոխվել են ընտրատարածքային հանձնաժողովների անդամներին ներկայացվող պահանջները: Ընտրական նոր օրենսգրքի համաձայն՝ պարզեցվել են ընտրատարածքային հանձնաժողովների անդամներին ներկայացվող պահանջները. ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների կազմում կարող են ընդգրկվել ընտրական իրավունք եւ բարձրագույն կրթություն ունեցող Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիները, որոնք հրապարակային քաղաքական գործունեություն չեն ծավալում:

Հանձնաժողովի անդամները միաձայն հաստատել են օրակարգում ընդգրկված հարցերը:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԼՈԲԱԼ ՖՈՐՈՒՄ

ՊԵԿ տեղեկատվության եւ հասարակայնության հեւ կապերի բաժնից Armlur.am-ին հայտնեցին, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահ Ռուսամ Բադասյանի գլխավորած պատվիրակությունը նոյեմբերի 9-11-ը մասնակցում է Իսպանիայի Սեւիլիա քաղաքում անցկացվող՝ Տնտեսական համագործակցության եւ զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) հարկման նպատակով թափանցիկության եւ տեղեկությունների փոխանակման գլոբալ ֆորումի 2022 թվականի լիագումար ժողովին, որը կազմակերպվել է Իսպանիայի ֆինանսների եւ հանրային ծառայության նախարարության հեւ համագործակցությամբ:

Լիագումար ժողովը միավորել է նախարարների, բարձրաստիճան ղեկավարների եւ պատվիրակների Գլոբալ ֆորումին անդամակցող 100-ից ավել պետություններից հարկային համագործակցության եւ տեղեկությունների փոխանակման ոլորտի առջեւ ծառացած ժամանակակից մարտահրավերները քննարկելու եւ դրանց միասնական ուժերով արձագանքելու նպատակով: Ժողովի խորագիրն է՝ «Տեղեկատվության փոխանակության եւ թափանցիկության տեղափոխումը նոր մակարդակի»:

2009թ.-ին մեկնարկած ՏՀԶԿ Գլոբալ ֆորումի գործունեության ընթացքում էական առաջընթաց է արձանագրվել հարկային տեղեկությունների թափանցիկության ապահովման եւ փոխանակման ասպարեզներում: Միայն 2022 թվականի ընթացքում տեղեկությունների ավտոմատացված փոխանակման ՏՀԶԿ ստանդարտը ներդրած երկրները միմյանց փոխանակել են 11 տրիլիոն եվրո ընդհանուր արժեքով ակտիվներին առնչվող մոտ 111 տրիլիոն ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկություններ: 2009 թվականից ի վեր ավելի քան 114 մլրդ եվրո լրացուցիչ հարկային եկամուտ է հայտնաբերվել ստանդարտի ներդրման շրջանակում գործարկված կամավոր հայտարարագրման ծրագրերի, օֆշորային հաշիվների ստուգումների եւ հարկային մարմինների կողմից ձեռնարկված այլ միջոցառումների շնորհիվ:

Հայաստանն անդամակցում է Գլոբալ ֆորումին 2015 թվականից եւ անցած տարիների ընթացքում ձեռնամուխ է եղել հարցումների հիման վրա տեղեկությունների փոխանակման ՏՀԶԿ ստանդարտի ներդրմանը, իսկ 2022 թվականից մեկնարկել են տեղեկությունների ավտոմատացված փոխանակման ստանդարտի ներդրմանն ուղղված նախապատրաստական աշխատանքները:

Լիագումար ժողովի ընթացքում ՊԵԿ նախագահ Ռուստամ Բադասյանը հանդես է եկել շնորհանդեսով, որտեղ ներկայացրել է հարկային տեղեկությունների փոխանակման հայաստանյան փորձը եւ ձեռքբերումները: ՊԵԿ նախագահը ներկայացրել է ստանդարտների ներդրման ընթացքը, կազմակերպումը եւ արդյունքները՝ շեշտելով Գլոբալ ֆորումի քարտուղարության կողմից տրամադրած փորձագիտական աջակցության կարեւորությունը հաջողության հասնելու համար: Առանձնահատուկ ուշադրության է արժանացել ՀՀ-ում ներդրված՝ ընկերությունների իրական սեփականատերերի մասին տեղեկությունների հավաքագրման նոր համակարգը եւ հարկային մարմիններին բանկային գաղտնիք հանդիսացող տեղեկությունների հասանելիության ապահովման համար կիրառված լուծումները:

Ներկայում, հարցումների հիման վրա, տեղեկությունների փոխանակման ՀՀ համակարգն անցնում է Գլոբալ ֆորումի կողմից անցկացվող փորձագիտական գնահատում, որի արդյունքում ակնկալվում է, որ Հայաստանը կստանա «մեծապես համապատասխանողի» գնահատականը:

ՏՀԶԿ Գլոբալ ֆորումի ամենամյա լիագումար ժողովի շրջանակում նախատեսվում է անցկացնել նաեւ Գլոբալ ֆորումի Ասիայի նախաձեռնությանն անդամակցող երկրների ներկայացուցիչների նիստ, որին կմասնակցի նաեւ ՀՀ պատվիրակությունը:

Ն.Հ.

ՄԱՐՔ

ՓՈՔՐ ԴՊՐՈՑԻ ՄԵԾ ՀՈԳՍԵՐԸ

Նոյեմբերի 7-ին Տավուշի մարզպետ Հայկ Չալումյանը, հիմք ընդունելով Բարեկամավանի դպրոցի տնօրենի թափուր տեղի համար նոյեմբերի 2-ին կայացած մրցույթի արդյունքները, որոշել է Աստղիկ Ազատյանին Բարեկամավանի միջնակարգ դպրոցի տնօրեն նշանակել եւ նրա հետ 5 տարի ժամկետով աշխատանքային պայմանագիր կնքել:

Ա. Ազատյանը անցյալ տարի դպրոցի տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթին մասնակցելու իրավունք տվող հավաստագիր չուներ, 2022թ. ապրիլի 5-ին, Տավուշի մարզպետի որոշմամբ, Բարեկամավանի դպրոցի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար էր նշանակվել այդ դպրոցի ուսուցչուհի Հասմիկ Սմոյանը: Ա. Ազատյանը Բարեկամավանի դպրոցում աշխատում է 1993 թվականից, 1996-ին, անսալով բարեկամավանցիների հորդորին, համաձայնվել է դառնալ դպրոցի տնօրեն: Նա ասում է , որ զղջացել է իր այդ որոշման համար. այն ժամանակ չգիտեր, թե տարիների ընթացքում դպրոցի աշակերտների թիվը որքան է նվազելու: 1970-ական թվականներին, երբ Աստղիկը սովորում էր Բարեկամավանի ութամյա դպրոցում, այդ կրթօջախն ուներ մոտ 330 աշակերտ, Աստղիկ Ազատյանի դասարանում 36 աշակերտ կար: Սահմանամերձ դպրոցում տարեցտարի նվազում է աշակերտների թիվը: 2017-ին դպրոցն ուներ 17 աշակերտ, 2021-2022 ուսումնական տարում՝ 13 աշակերտ: Այժմ Բարեկամավանի Մայիս Ղարաքեշիշյանի անվան միջնակարգ դպրոցն ունի 12 աշակերտ: Դպրոցի առաջին դասարանում սովորում է 3 աշակերտ, դպրոցում չկան 2-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 9-րդ, 10-րդ եւ 12-դ դասարաններ: Երկու տարի առաջ դպրոցի շենքի տանիքի նորոգումը կիսատ է մնացել, անձրեւաջրերը լցվում են դպրոցի ներս՝ թրջելով պատերը: Տավուշի մարզպետ (այժմ՝ նախկին) Հայկ Չոբանյանը ներկայացրել է, որ դպրոցի տանիքի նորոգման համար բավական է 8,5 միլիոն դրամը: ՌԴ Ստավրոպոլ քաղաքում բնակվող բարեկամավանցիները հանգանակել են այդ գումարը, սակայն գումարը չի բավարարել աշխատանքներն ավարտելու, բանվորներին վարձատրելու համար: Առաջարկություն է եղել մնացած շինանյութը վաճառել եւ գումարն ուղղել համագյուղացի բանվորների վարձատրությանը, սակայն Ա. Ազատյանը դեմ է եղել, առաջարկը չի իրականացել: Երկու տարի առաջ փոթորիկը պոկել է Բարեկամավանի բուժկետի տանիքի կեսը, անձրեւաջրերը լցվում են բուժկետ, այնտեղ հակասանիտարական վիճակ է: Տավուշի մարզպետարանից առաջարկ է եղել բուժկետը տեղափոխել դպրոցի շենք: Ա. Ազատյանը ճիշտ չի համարում, որ բուժկետի այցելուները, որոնց մեջ կան նաեւ հիվանդներ, դպրոցի աշակերտների հետ օգտվեն նույն մուտքից. դպրոցի տնօրենը համաձայն է դպրոցի տարածքում բուժկետ գործելուն, եթե բուժկետի համար առանձին մուտքի դուռ բացվի: Բարեկամավանի դպրոցի, ինչպես սահմանամերձ Բարեկամավան գյուղի համար, խնդիր է որակյալ խմելու ջուր չունենալը: Դպրոցը գյուղի առանձնատների նման ստանում է խորքային հորից մղվող, հակասանիտարական վիճակում գտնվող ջրավազան մղվող ջուրը, որը դպրոցի ուսուցիչները եւ աշակերտները չեն խմում:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 12 ճՏՊ. 14 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐ

ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ՝ ԴԵՊԻ ԵՐՈՒՍԱՂԵՄ

ՀՀ ՊՆ զինծառայողների սոցիալական պաշտպանության վարչությունում նոյեմբերի 10-ին տեղի է ունեցել հանդիպում «Ուխտագնացություն դեպի Երուսաղեմ» բարեգործական ծրագրի շրջանակում Երուսաղեմ մեկնող հաշմանդամություն ունեցող զինծառայողների հերթական՝ երրորդ խմբի հետ:

Բարեգործական ծրագիրը, որի նպատակը 44-օրյա պատերազմի հետեւանքով ծանր վիրավորումներ ստացած նախկին զինծառայողների հոգեբանական վերականգնմանը եւ վերաինտեգրմանը նպաստելն է, մշակվել է ՀՀ ԱԺ պաշտպանության եւ անվտանգության մշտական հանձնաժողովի եւ Երուսաղեմի Հայոց Պատրիարքարանի համատեղ ջանքերով: Նախաձեռնությանը միացել եւ ՀՀ ԱԺ պաշտպանության եւ անվտանգության մշտական հարցերի հանձնաժողովի հետ միասին դրա իրականացման առաջնորդությունն է ստանձնել ՀՀ պաշտպանության նախարարությունը:

Հանդիպման ընթացքում ՀՀ ԱԺ պաշտպանության եւ անվտանգության մշտական հարցերի հանձնաժողովի նախագահ Ա? Քոչարյանն ընդգծել է, որ ծրագրի իրականացմանը Պաշտպանության նախարարության միանալով՝ծրագրի առաքելությունը լրացվել է նոր իմաստով՝ ապահովել մշտական կապը բանակի եւ հայրենիքի պաշտպանների միջեւ՝ նրանց պահելով պետության ու բանակի մշտական հոգածության ներքո, ամրապնդել կապը բանակի, նրա պաշտպանների եւ եկեղեցու միջեւ: Եվ այս խորհուրդի մարմնավորումն է այն, որ վիրավոր զինծառայողներին ուղեկցող խմբում ներգրավված են ինչպես պատերազմի բովով անցած սպաներ, այնպես էլ ՀՀ ԶՈՒ հոգեւոր առաջնորդ Մովսես վարդապետ Սարգսյանը: Ուխտագնացության մասնակիցներին ՀՀ ԶՈՒ հոգեւոր առաջնորդը փոխանցել է Վեհափառ Հայրապետի օրհնությունը:

Ողջունելով ուխտագնացության մասնակիցներին՝ պաշտպանության նախարարի տեղակալ Ա. Սարգսյանը Պաշտպանության նախարարության ամբողջական սատարումն է հայտնել ծրագրին, կարեւորել դրա շարունակականության ապահովումը՝ հույս հայտնելով, որ հնարավորինս մեծ թվով վիրավոր զինծառայողներ հաղորդակից կլինեն ծրագրին:

Հերթական խումբը Երուսաղեմ կմեկնի նոյեմբերի 15-ին՝ ԱԺ պաշտպանության եւ անվտանգության մշտական հարցերի հանձնաժողովի ներկայացուցիչների ուղեկցությամբ:

ՀԻՄՆՎԵԼ Է

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՄՆ հասարակայնության հետ կապերի եւ տեղեկատվական վարչությունից Armlur.am-ին հայտնեցին, որ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Ժաննա Անդրեասյանը երեկ այցելել է Արմավիրի մարզի եզդիաբնակ Ֆերիկ համայնք, որտեղ առաջին անգամ նախադպրոցական տարիքի երեխաները հնարավորություն ունեն հաճախելու նախակրթարան:

ԿԳՄՍ նախարարի տեղակալին ուղեկցել են ՀՀ Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը եւ ԿԳՄՄՆ հանրակրթության վարչության պետ Արսեն Բաղդասարյանը:

Նախադպրոցական այլընտրանքային ծառայություններ ձեւավորելու համար 2021 թվականից մեկնարկած պետական ծրագրով բյուջեից տրամադրվում է դրամաշնորհ: Նպատակը նախադպրոցական ծառայությունները հնարավորինս հասանելի դարձնելն է՝նպաստելով երեխաների՝ վաղ տարիքում զարգացմանը եւ կարողությունների ընդլայնմանը: Դրամաշնորհային մրցույթի կարեւոր նախապայմաններից մեկը ստեղծված ենթակառուցվածքների պահպանումն ու նախադպրոցական ծառայությունների շարունակականության ապահովումն է, որը պետք է իրականացնեն համայնքները:

Ֆերիկ համայնքը դրամաշնորհի համար դիմած 10 բնակավայրերից մեկն է. այստեղ արդեն հիմնված նախակրթարանում ձեւավորվել է խումբ, որտեղ հաճախում են համայնքի 4-5 տարեկան բոլոր երեխաները: Ուսումնական պլանն ամբողջովին իրականացվում է՝ համաձայն նախադպրոցական կրթության պետական ծրագրի:

Ժաննա Անդրեասյանն իր խոսքում կարեւորել է ազգային փոքրամասնություններով բնակեցված բնակավայրերում նախադպրոցական ծառայությունների ընդլայնումը. «Կառավարության ծրագրով բոլոր բնակավայրերի երեխաների համար նախադպրոցական ծառայությունները հասանելի դարձնելու խնդիր ենք դրել: Ֆերիկում նախադպրոցական հաստատություն երբեք չի եղել: Ուրախ եմ, որ արդեն տեղում հնարավոր է կազմակերպել այս կրթությունը, որը շատ կարեւոր է երեխաների հետագա զարգացման համար: Հուսով եմ՝ երեխաների թիվն էլ տարեցտարի կավելանա»: Նա նաեւ նշել է, որ ՀՀ կառավարության գործունեության ծրագրով նախատեսվում է ընդլայնել նախադպրոցական ծառայությունների ծավալը՝ մասնավորապես երեխաների ընդգրկվածությունը նախադպրոցական հաստատություններում հասցնելով առնվազն 70 տոկոսի:

Նախակրթարանի հիմնումը կարեւորել է նաեւ հիմնական դպրոցի տնօրեն Նարինե Ֆարֆարյանը. «Առաջին անգամ դպրոց հաճախող երեխաները հիմնականում չէին կարողանում հայերեն խոսել եւ հաղորդակցվել, իսկ դա խանգարում էր տարբեր առարկաների ուսուցմանը: Նախակրթարանի հիմնմամբ այդ խնդիրն այսօր լուծվում է, քանի որ այնտեղ դասընթացներն իրականացվում են հայերենով»:

Ֆարֆարյանի խոսքով՝ այս պահին հիմնական դպրոցում եւ նախակրթարանում իրականացվում են ջեռուցման համակարգի տեղադրման աշխատանքները, ավարտվել է ջրամատակարարման ապահովումը, շուտով արդեն կվերանորոգվի եւ կկահավորվի ճաշարանը, որտեղ հունվարից կիրականացվի տարրական դասարաններում տաք սննդի ապահովման պետական ծրագիրը:

«Կատարված աշխատանքներից հետո դպրոցի առաջնային խնդիրը մարզադահլիճի եւ հանդիսությունների դահլիճի բացակայությունն է: Ամեն դեպքում, ունենք վստահություն, որ բոլոր խնդիրներն էլ ժամանակի ընթացքում լուծվելու են»,- նշում է դպրոցի տնօրենը:

Ժաննա Անդրեասյանը շրջայց է կատարել Ֆերիկի հիմնական դպրոցում, հետեւել տարբեր դասարաններում իրականացվող ուսումնական պրոցեսին, զրուցել մանկավարժների եւ աշակերտների հետ: Նախարարի տեղակալը կարեւորել է ազգային փոքրամասնություններով բնակեցված բնակավայրերի նկատմամբ պետական հոգածությունը՝ շեշտելով մայրենի լեզվի ուսուցանման արդյունավետության բարելավումը: ԿԳՄՍ նախարարի տեղակալի խոսքով՝ պետությունը շարունակաբար խրախուսում է ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների լեզվի իմացությունը՝ պետական հանրակրթական դպրոցներում ապահովելով համապատասխան կրթություն. «Եզդիերենը, ասորերենը, քրդերենն այսօր դասավանդվում են այն համայնքային դպրոցներում, որտեղ համապատասխան բնակչություն կա: Ունենք հաստատված առարկայական ծրագրեր, հանրակրթության պետական չափորոշչում հստակ ամրագրված է՝ ազգային փոքրամասնությունների մայրենի լեզուն ուսումնական պլանի մաս է կազմում: Մենք նաեւ պետական բյուջեի միջոցներով ամեն տարի տպագրում ենք անհրաժեշտ դասագրքերն ու դրանք անվճար տրամադրում դպրոցներին: Այս տարվանից ազգային փոքրամասնությունների լեզուն եւ գրականությունը դասավանդող ուսուցիչները հնարավորություն ունեն մասնակցելու կամավոր ատեստավորմանը եւ օգտվելու սահմանված հավելավճարներից»:

Ժաննա Անդրեասյանին տեղեկացրել են, որ Ֆերիկի հիմնական դպրոցի եզդիերենի ուսուցիչ Ռուստամ Հասոյանը մասնակցել է կամավոր ատեստավորմանն ու հաղթահարել 70 տոկոսի շեմը, ինչի շնորհիվ աշխատավարձի բարձրացում կունենա:

«Շատ ուրախ եմ, որ այս դպրոցի ուսուցիչը մասնակցել ու հաջող արդյունք է գրանցել, այժմ արդեն կունենա բարձրացված դրույքաչափ եւ հավելավճար: Սա շարունակական քաղաքականություն է, եւ պարբերաբար այսպիսի այցեր ունենալու եմ նաեւ մյուս դպրոցներ»,- եզրափակել է Ժաննա Անդրեասյանը: Նա Ֆերիկի միջնակարգ դպրոցի մյուս ուսուցիչներին եւս հորդորել է մասնակցել կամավոր ատեստավորմանը:

Ս.Հ.

18-ՐԴ ԳԱԳԱԹՆԱԺՈՂՈՎԸ

ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԱՆՑՎԵԼՈՒ Է ԹՈՒՆԻՍԻՆ

Թունիսի Ջերբա քաղաքում նոյեմբերի 19-20-ը տեղի է ունենալու Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության (ՖՄԿ) 18-րդ գագաթնաժողով ը, որի ընթացքում Հայաստանը ՖՄԿ գագաթնաժողովի նախագահությունը փոխանցելու է Թունիսին. այս մասին հայտնեցին ՀՀ ԿԳՄՍ նախարարությունից:

Գագաթնաժողովի շրջանակում նոյեմբերի 13-20-ը Ջերբա քաղաքում գործելու է Ֆրանկոֆոնիայի ավան: Մասնակից երկրները, ՖՄԿ գործընկերներն ու գործակալությունները հնարավորություն կունենան ցուցադրել իրենց երկրների մշակութային բազմազանությունը՝ձեռագործ աշխատանքների ցուցահանդես-վաճառք, մասնակից պետությունների զբոսաշրջային հնարավորությունների, արվեստի ու մշակույթի գործերի, ինչպես նաեւ ազգային խոհանոցի ներկայացում:

Այս հարթակում Հայաստանի Հանրապետությունը ներկայանալու է «Մշակույթ եւ տեխնոլոգիա» խորագիրը կրող տաղավարով, որի ձեւավորման առանցքում հայկական հարուստ գորգագործական մշակույթն է:

Ցուցադրվելու են գորգեր (բուրդ, մետաքս) եւ ասեղնագործ նմուշներ, անցկացվելու են գորգագործության վարպետության դասեր, լինելու են շրջայցեր VR ակնոցի միջոցով, ինչպես նաեւ ներկայացվելու է «Արմաթ» ճարտարագիտական արհեստանոցների կրթական նախագիծը՝3D տպիչների միջոցով:

Գագաթնաժողովի շրջանակում Հայաստանից հանդես կգան «Մեկնարկ» տաղանդի զարգացման նպատակային ծրագրի երաժշտական խումբն ու պատանի քանոնահարները: Պատանի երաժիշտները նախատեսվող համերգին կներկայացնեն դասական եւ ազգային ստեղծագործությունների կատարումներ:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՆՈՐ ՆՇԱՁՈՂ

«ՖԻԼՄԸ ԿՈՆՅԱԿԻ ՆՄԱՆ Է». Դ. ԲԱԲԱԽԱՆՅԱՆ

Հաջորդ տարի «Արմենիա» հեռուստաընկերության տնօրեն, բազմաթիվ ֆիլմերի, սիթքոմների, հեռուստանախագծերի ռեժիսոր եւ պրոդյուսեր Դավիթ Բաբախանյանը հանդիսատեսին կներկայացնի նոր ֆիլմ՝ իրավիճակային կոմեդի ժանրում: Նախապատրաստական աշխատանքները ընթացքի մեջ են: Ֆիլմի սցենարիստը Աշոտ Աբրահամյանն է, պրոդյուսերը՝ Ռուբեն Ջաղինյանը:

-Պարո՛ն Բաբախանյան, Ձեր նախորդ ֆիլմերը՝ «Պահանջվում է միլիոնատեր»-ը, «Poker.am»-ը, «Փեսացուն կրկեսից»-ը, «Հյուսիս հարավ»-ը, կինոմանները բարձր գնահատեցին: Արդյոք քոմեդի ժանրը շարունակո՞ւմ է պահանջված լինել:

-Որպես 4 ֆիլմի ռեժիսոր՝ վստահ կարող եմ արձանագրել, որ մեր երկրում գեղարվեստական ֆիլմերում հումորային ժանրը մնում է ամենապոպուլյարը: Վերջին տասնամյակում այս ժանրը ամենադիտվող ֆիլմերի հնգյակում է: Այս նոր ֆիլմը պարտավորված է գերազանցել սահմանած նախորդ նշաձողը: «Շարմ» ընկերության թիմը, որի հետ աշխատում ենք, արդեն երկար տարիների պատմություն ունի: Վստահ եմ, որ ստեղծելու ենք տարբերվող, գունավոր եւ տարբեր արկածային իրավիճակներով լի ֆիլմ, որը կարող է մեր քաղաքացիներին մի փոքր կտրել առօրյա հոգսերից:

-Ինչպիսի՞ն պետք է լինի լավ ֆիլմը:

-Լավ ֆիլմը մեկ անգամ դիտելուց հետո պետք է ցանկություն ունենաս դիտել նաեւ 10-րդ անգամ: Մեր բոլորի կողմից սիրված խորհրդային ֆիլմերը՝ «Բաղնիքդ անուշ», «Աշխատանքային սիրավեպը», «Կովկասի գերուհին», մինչեւ օրս դիտում ենք յուրաքանչյուր Ամանորին: Ֆիլմը՝ որպես արվեստի գործ, ուժեղ է, երբ մարդիկ ցանկանում են այն անընդհատ դիտել: Այն որքան հնանում է, կոնյակի նման դառնում է ավելի մնայուն. սա այն դեպքն է, երբ «փոշին» կադրին տալիս է արժեք: Ֆիլմը եթե անցնում է ժամանակի միջով ու դիմակայում է, ստանում է ավելի մեծ արժեք:

-Ինչպիսի՞ն է մերօրյա կինոն:

-Մենք գտնվում ենք «Турбулентность»-ում, ժամանակն է թելադրում՝ ինչ ստեղծել: Կարելի է ասել «ֆասթ ֆուդի» շրջան է, ամեն բան արագ փոխվում է, կյանքի ռիթմը այլ է, ինչն էլ թելադրում է իր պահանջները կինոյից, որը կարող է այդքան էլ որակյալ չլինել: Մեծ շնորհակալություն բոլոր նրանց, ովքեր կարողանում են կանգնեցնել ժամանակը ու ստեղծել որակյալ եւ մնայուն արտադրանք:

-Ո՞րն է Ձեր երազանքի ֆիլմը, որ ցանկանում եք նկարահանել:

-Ֆիլմ, որը կմնա պատմության մեջ: Մարդուն հիշում են աշխատանքով, որը մնում է սերունդների հիշողության մեջ: Չգիտեմ՝ ժամանակի ճակատամարտում ինչ ապագա կունենան իմ ֆիլմերը, բայց այդ մեկ ֆիլմը ես դեռ պետք է նկարահանեմ....

-«Արմենիա» հեռուստաընկերությունը վերջին տարիներին ներկայացավ հետաքրքիր ձեւաչափով եւ հեռուստադիտողին ներկայացրեց 24-մասանի հեռուստաֆիլմեր: Ինչպե՞ս են ստեղծվում նման ֆիլմերը:

-Այո, մենք ներկայացրինք 24-մասանի հեղինակային հեռուստաֆիլմեր, ի դեպ՝ 50-ից ավելի, որոնք հայկական հեռուստաեթեր բերեցին որակային նոր նշաձող: Պատմական, սոցիալական եւ հասարակության համար խնդրահարույց տարբեր թեմաների շուրջ («Հին արքաներ», «Դեպի վայրէջք», «Դեբեդի գաղտնիքը», «Երկրորդ կյանք», «Ոսկե հանքեր» եւ այլն) հեռուստաֆիլմեր, որոնք նաեւ հասարակության համար կրում են կրթական բնույթ: «Արմենիա» հեռուստաընկերությունը ունի սեփական արտադրությունը, ինչպես նաեւ մշակել է գործակցության տարբեր մոդելներ փոքր ու միջին արտադրող ընկերությունների հետ: Մենք հնարավորություն ենք ստեղծում նաեւ այլ ընկերություններին իրենց աշխատանքը ներկայացնել հեռուստաընկերության եթերացանցում: Այդպես խթանում ենք նաեւ նոր զարգացող ընկերություններին եւ ստեղծագործական խմբերին՝ ներկայացնելով նրանց հեռուստաարտադրանքը եթերում:

-Հայ-ռուսական սլավոնական համալսարանում ռեժիսորական վարպետություն խմբի ղեկավարն եք: Ամենակարեւոր մեսիջը ո՞րն է, որ փոխանցում եք Ձեր ուսանողներին:

-Եթե անկեղծ, դասավանդման որոշումս փոքր-ինչ էգոիստական էր: Ավարտել եմ Երեւանի պետական բժշկական համալսարանը եւ 1995 թվականից աշխատել եմ ֆիլմարտադրության բնագավառում: Ամեն անգամ՝ մինչեւ լսարան մտնելը, ահռելի նախապատրաստական աշխատանք եմ անում. շատ կարեւոր է տիրապետել նաեւ մանկավարժական հմտություններին: Կարող ես լինել լավ մասնագետ, բայց չկարողանաս փոխանցել քո հմտությունները: Իմ ուսանողներին փոխանցում եմ գործնական գիտելիքներ, պրակտիկա եւ, իհարկե, սովորում եմ նաեւ իրենցից: Երիտասարդների թարմ մտածելակերպը օգնում է նաեւ ուշ ծերանալ ու միշտ լինել թրենդի մեջ: Ու քանի որ կինոմանների ամենամեծ աուդիտորիան հենց երիտասարդներն են, նաեւ օգնում են, որ չկորցնեմ մասնագիտական հոտառությունս: Հպարտ եմ, որ ունենք այսքան տաղանդավոր, խելացի, ինտելեկտուալ երիտասարդներ, ինչպիսին իմ ուսանողներն են:

Զրուցեց ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԸ

ԿԱՅԱՑԵԼ Է

ԿԱՄԵՐԱՅԻՆԸ ՀԱՆԴԵՍ ԿԳԱ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ

Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը կայացել է Հայաստանի պետական կամերային նվագախմբի համերգը՝ Գերմանիայում կայանալիք հյուրախաղերին ընդառաջ: Այս մասին հայտնեցին ՀՀ ԿԳՄՍ նախարարությունից:

Համերգի ընթացքում նվագախումբը (գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր՝ Վահան Մարտիրոսյան) հանդես է եկել գերմանացի դիրիժոր Ֆիլիպ Ամելունգի ղեկավարությամբ, որի հրավերով նվագախումբը մեկնել է Գերմանիա:

Որպես մենակատար հանդես է եկել Գինեսի ռեկորդակիր, ճանաչված ջութակահար Նիկոլայ Մադոյանը. ծրագրում՝ Ֆելիքս Մենդելսոն, Էդուարդ Բաղդասարյան, Ռուբեն Ալթունյան, Էդվարդ Միրզոյան:

Գերմանիայի Դաշնությունում հյուրախաղերը կանցկացվեն նոյեմբերի 10-18-ը: Հյուրախաղերի շրջանակում, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության աջակցությամբ, նվագախումբը Գերմանիայի Դաշնության Սաքսոնիա-Անհալթ երկրամասի խորհրդարանում՝ Լանդթագում, հանդես կգա «Հայաստանի օր» միջոցառմանը, ինչպես նաեւ երեք համերգով կմասնակցի «Իկինգ» փառատոնին: Նախատեսված է եւս երկու համերգ Նաումբուրգ եւ Մագդեբուրգ քաղաքներում:

ԼՈՒՐԵՐ

ՎԱՐՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐ

Ֆրանսիայի Նիս, Լիոն, Վալանս, Գրենոբլ, Ռոման քաղաքներում հայ-ֆրանսիական պատանեկան նվագախումբը հանդես է եկել համերգներով: Հայ մասնագետների մասնակցությամբ կազմակերպվել են նաեւ վարպետության դասեր: Վալանս քաղաքի քաղաքապետի հրավերով պատանի հայ եւ ֆրանսիացի երաժիշտները հյուրընկալվել են քաղաքապետարանում, որտեղ ելույթ են ունեցել լարային քառյակի կազմով: Նշենք, որ 2014թ. Երեւանի Պ. Չայկովսկու անվան միջնակարգ երաժշտական մասնագիտացված դպրոցի եւ Ռոմանի կոնսերվատորիայի միջեւ ծավալված ակտիվ գործունեության եւ փոխհամագործակցության արդյունքում ստեղծվել է հայ-ֆրանսիական պատանեկան նվագախումբը: 2014 թվականից ի վեր կազմակերպվում են փոխայցելություններ եւ համատեղ համերգներ Ֆրանսիայի եւ Հայաստանի տարբեր քաղաքներում:

ՉԻ ՄԱՍՆԱԿՑԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆԸ

Դորտմունդի «Բորուսիայի» 33-ամյա պաշտպան Մատս Հումելսը մեկնաբանել է Գերմանիայի հավաքականի հայտացուցակում չընդգրկվելը: Նա չի մասնակցի աշխարհի առաջնությանը: «Առանց որեւէ մեկին վիրավորելու. սա իմ կարիերայի գլխավոր հիասթափությունն է: Կերկրպագեմ մեր հավաքականին աշխարհի առաջնությունում եւ կօգտագործեմ այս մեկ ամիսը մարզումներին կատարելագործվելու համար, ինչպես միշտ եմ արել»,- ասել է Հումելսին: Հումելսը Գերմանիայի հավաքականի կազմում աշխարհի չեմպիոն է դարձել 2014-ին: Նոյեմբերի 20-ին Քաթարում մեկնարկելիք աշխարհի առաջնության խմբային փուլում Գերմանիայի հավաքականի մրցակիցները կլինեն Իսպանիայի, Ճապոնիայի եւ Կոստա Ռիկայի թիմերը:

ՎԵՐԱԴԱՐՁ՝ ՀԱՎԱՔԱԿԱՆ

«Մանչեսթեր Յունայթեդի» հարձակվող Մարկուս Ռեշֆորդը մեկնաբանել է «Աստոն Վիլայի» նկատմամբ 4:2 հաշվով հաղթանակը Անգլիական լիգայի գավաթի խաղարկության 1/16 եզրափակիչում եւ իր վերադարձը Անգլիայի հավաքական: Ռեշֆորդը կմասնակցի նոյեմբերի 20-ին Քաթարում մեկնարկելիք աշխարհի առաջնությանը: «Իմ նպատակն էր վերադառնալ ֆուտբոլային խաղը վայելելուն: Հիմա կարողացել եմ հասել այդ մակարդակին եւ վայելում եմ ֆուտբոլը: Միշտ հաճելի է «Օլդ Տրաֆորդում» գոլ խփելը. այս խաղում չորս գոլ խփեցին, երկուսը, երբ հետ էինք հաշվի մեջ: Գլխավորը «Մանչեսթեր Յունայթեդն» է: Եթե այստեղ հասնում եմ ամենաբարձր մակարդակի, Անգլիայի հավաքականից էլ կնկատեն: Ես շատ ուրախ եմ, որ վերադարձել եմ հավաքական, եւ անհամբեր սպասում եմ աշխարհի առաջնությանը, բայց մինչեւ այդ հույս ունեմ, որ կիրակի հաղթանակով կավարտենք առաջին կեսը»,- ասել է Ռեշֆորդին: «Աստոն Վիլայի» դեմ խաղում Ռեշֆորդն անցկացրել էր 82 րոպե եւ դարձել մեկ գոլի հեղինակ:

● *Նոյեմբերի 13-ին Երեւանի պետական կամերային թատրոնում տեղի կունենա «Ի զէն» թատերական ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1000-5000 դրամ: Սկիզբը՝ ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ինչո՞ւ ներկայացնել անասնաբուժասանիտարական փորձաքննության ծանուցում:
Մելինե Նազարյան (34 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. «Անասնաբուժասանիտարական փորձաքննություն» ծանուցման ենթակա գործունեության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Գործունեության իրականացման ծանուցման մասին» եւ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների համաձայն: «Անասնաբուժասանիտարական փորձաքննություն» գործունեության իրականացմամբ զբաղվելու իրավունք ունեն իրավաբանական եւ ֆիզիկական անձինք, ինչպես նաեւ անհատ ձեռնարկատերերը, որոնք նշված գործունեությամբ զբաղվելու համար ՀՀ ֆինանսների նախարարություն են ներկայացնում ՀՀ կառավարության 2016 թվականի հունիսի 30-ի «Ծանուցման ձեւերը, ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող անձանց հաշվառման գրանցամատյանների վարման եւ հաշվառված անձանց տվյալների հրապարակման կարգը սահմանելու մասին» թիվ 673-Ն որոշման թիվ 1 հավելվածով սահմանված ծանուցումը եւ կից փաստաթղթերը, որոնք կարող են ներկայացվել առձեռն, փոստով: «Անասնաբուժասանիտարական փորձաքննություն» ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունք ձեռք բերելու համար անձը պարտավոր է վճարել օրենքով սահմանված պետական տուրքը եւ պետական տուրքի վճարման անդորրագիրը կամ պետական վճարումների էլեկտրոնային համակարգի կողմից գեներացված անդորրագիրը կամ անդորրագրի 20-նիշանոց ծածկագիրը ծանուցման հետ միաժամանակ ներկայացնել լիազոր մարմին:
ՀՀ ֆինանսների նախարար

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». «Անասնաբուժասանիտարական փորձաքննություն» ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող անձանց հաշվառումը, ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունքի կասեցումն ու դադարեցումը, ինչպես նաեւ ծանուցման ենթակա գործունեության իրականացման հետ կապված բոլոր հարաբերությունները կարգավորվում են «Գործունեության իրականացման ծանուցման մասին» եւ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով:

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ի՞նչ խնդիրներ է առաջանում ալիմենտ վճարել պարտավոր անձի՝ մշտական բնակության համար օտարերկրյա պետություն մեկնելու դեպքում:
Լուսինե Առաքելյան (24 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Այն անձը, որը մշտական բնակության համար մեկնում է օտարերկրյա պետություն, կարող է ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնություն կնքել ընտանիքի այն անդամների հետ, որոնց նա օրենքով պարտավոր է ապրուստի միջոց տրամադրել՝ սույն օրենսգրքի 87-րդ, 88-րդ, 91-րդ եւ 92-րդ հոդվածներին համապատասխան: Համաձայնություն չկնքվելու դեպքում շահագրգիռ անձը կարող է դիմել դատարան՝ ալիմենտի չափը կայուն դրամական գումարով որոշելու եւ ալիմենտը միանվագ վճարելու կամ ալիմենտի հաշվին որոշակի գույք տրամադրելու կամ այլ եղանակով ալիմենտ վճարելու մասին:
ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ինդեքսավորման նպատակով ալիմենտի չափը դատարանը սահմանում է նվազագույն աշխատավարձի չափի որոշակի թվի համապատասխանող կայուն դրամական գումարով:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում

Թայֆունն ու իր խնամողը՝ տիկին Ալլան, նույն օրն են նշում իրենց ծնունդը: Գետաձիուն ծնված օրից խնամել է տիկին Ալլան: Թայֆունը երեկ դարձավ 14 տարեկան:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **11.11.2022**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: